AZG Armenian Daily #111,06/16/2001

«Ալիքը», Արաքսը», «Լոյսը»

Համառոտ անդրադարձ իրանահայ մամուլին

ՀՅԴ տեսակետներն արտահայտող եւ Թեհրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթը անցյալ տարի նշեց հիմնադրման 70-ամյակը: Ավելի քան յոթ տասնամյակ «Ալիքը» ոչ միայն իրանահայ քաղաքական, մշակութային, սոցիալական, գրական կյանքի արձանագրողն է, այլեւ անուրանալի դեր է կատարել իրանահայության հայապահպանման, հայեցի դաստիարակելու եւ կրթելու գործում: Օրաթերթը լույս է տեսնում ութ էջով, 5000 տպաքանակով: Տարածվում է Իրանի բոլոր գաղութներում՝ Թեհրան, Սպահան, Շիրազ, Սիվազ, Թավրիզ, Ուրմիա, Անզալի, ինչպես նաեւ արտերկրի այլ հայկական գաղութներում, Հայաստանում: Թերթի արտոնատերն Ալբերտ Աճեմյանն է:

«Ալիքն» իր համարներում հիմնականում անդրադառնում է իրանահայության գրական, մշակութային, մարզական կյանքին, Իրանի քաղաքական կատեւորագույն իրադարձություններին, լուրեր եւ հոդվածներ է տպագրում հայաստանյան գործակալություններից եւ օրաթերթերից՝ հիմնականում «Երկիրից», «Հայոց աշխարհից», «Դրոշակից»: «Ալիքն» ունի մեկ մշտական՝ մարզական էջ: Օրաթերթի վերջին երկու էջերում հիմնականում տպագրվում են գովազդներ եւ հայտարարություններ: «Ալիքը» ՀՅԴ տեսակետներ արտահայտող թերեւս միակ պարբերականն է, որը ֆինանսավորման կարիք չունի, երբեմն աշխատում է օգուտով:

«Արաքս» գրական, մշակութային, հասարակական ամսագիրն ունի ընդգծված հակադաշնակցական ուղղվածություն, արտոնատերն Անահիտ Իսայանն է: Լույս է տեսնում 3000 տպաքանակով, որից 500-ը դուրս է ուղարկվում: Մնացյալը սպառվում է իրանահայ գաղութներում: Լույս է տեսնում 1987 թ. մարտից, ամսագրի վերջին 7-8 էջերը պարսկերենով են: «Արաքսը» հիմնականում կենտրոնանում է քաղաքական խնդիրների վրա, զբաղվում Հայ դատի հարցերով, քիչ չեն հայաստանյան մամուլից՝ հիմնականում «Ազգից» արտատպվող հրապարակումները:

«Արաքսը» ԱՍԱԼԱ-ի գաղափարներն արտահայտող ամսագիր է: Արաքսականների եւ ՀՅԴ-ի միջեւ առանցքային տարաձայնությունը եկեղեցու խնդրում է: Առաջինները իրանահայ երեք թեմերը (Ատրպատական, Թեհրան, Լոր Ջուդա) մայր աթոռ Սուրբ Էջմիածնին վերադարձնելու կողմնակիցներ են:

«Լոյսը» մշակութային եւ հասարակական երկշաբաթաթերթ է: Լույս է տեսնում 2000 թ. ից, վերջին 10 էջերը պարսկերենով են: Հիմնականում անդրադառնում է Հայոց ցեղասպանությանը, հայաստանյան լուրերին, հայկական եւ իրանահայ մշակույթին: «Լոյսն» ունի մանկական, մարզական, առողջապահական էջեր: Արտոնատերը եւ գլխավոր խմբագիրը էդ. Ըստոնասարյանն է: «Լոյսը» լույս է տեսնում ավանդական ուղղագրությամբ: Ի տարբերություն «Ալիքի» եւ «Արաքսի», «Լոյսը» կուսակցական-քաղաքական խնդիրների գրեթե չի անդրադառնում:

Թ. Հ.